

ՀԱՅՅԵՐԵՆԻ XVIII ԴԱՐԻ ՈՒՂՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ս. Վ. ԳՅՈՒՐՈՒԿԱՂՅԱՆ

XVII դարի երկրորդ կեսից զարգացման նոր թափ է առնում հայ մշակույթը: Հրատարակվում են կրոնական գրականություն, պատմական, լեզվաբանական-քերականական աշխատություններ:

Դարերի ընթացքում դասական գրաբարը խիստ փոխվել էր տեղական խոսվածքների, այլև լատինաբանության ազդեցության տակ: XVIII դարում ձգտում են վերականգնել նախկին «մաքուր գրաբարը» (Մ. Սեբաստացի և ուրիշներ), գրում են գրաբարի քերականություն, բառարաններ: Մտավորականության մի զգալի մասը նպատակ ուներ ժողովրդից հեռացած գրաբարը նորից ժողովրդին մոտեցնել, ուստի մտածում էր այն դյուրահաղորդ դարձնել ժողովրդին: Այս տեսակետից աչքի էին ընկնում հատկապես Մխիթարյաններն ու Պոլսի պատրիարքարանը: «Նոր մատենագիրները,—գրում է նրանց մասին Ակինյանը,—մոռցած էին, թե մեռյալ լեզվի մը հետ էր իրենց գործը»¹: Գրաբարը վերականգնելու ձգտումը, սակայն, դրական դեր խաղաց մեր մշակույթի զարգացման գործում, այնքանով, որ հրատարակեցին պատմիչների թողած ժառանգությունը, քերականության գրքեր, բառարաններ, պայքար ծավալվեց հայերենը օտարաբանություններից զտելու համար: Ժամանակի գիտունները գրաբարյան և ժողովրդական-բարբառային զույգ ձևերից սուղաչինն ընտրեցին, մի երևույթ, որ Այտընյանն անվանում էր «յետաշրջութիւն», իսկ Սճառյանը մեծ բարիք է համարում, որովհետև այդ ճանապարհով ստեղծվեց միասնական դրական լեզու. «Ժամանակակից հայը չկտրվեց անցյալից, հայերեն բառերը V դարից մինչև այսօր պահեցին իրենց պատկերը, քանի որ գրաբարի ու աշխարհաբարի ուղղագրությունը նույնն է»²:

Միաժամանակ ժողովրդին հասկանալի լինելու պահանջը ստիպում էր մտավորականությանը գրել կենդանի լեզվով՝ աշխարհաբարով: Եվ նույն Մխիթար Սեբաստացին, որ գրում էր գրաբարի քերականություն, գրում է նաև աշխարհաբարի քերականություն: Որքան էլ տարօրինակ է, աշխարհաբարը մշակողները՝ քերականության հեղինակներն այն նույն մտավորականներն էին, ովքեր պայքարում էին գրաբարի մաքրության ու ժողովրդի հասկանալի դարձնելու համար:

Մի կողմից՝ գրավոր խոսքում, պատմագրության և կրոնական գրականության մեջ ամրանում են գրաբարի դիրքերը, մյուս կողմից՝ բանավոր աշխարհաբարը սկսում է հանդես գալ նաև գրքերում, մշակվում է գրավոր խոսքը, զրվում է աշխարհաբարի քերականությունը: Սկսում են ձևավորվել արևմտահայ և արևելահայ գրական աշխարհաբար լեզուները³: Շրջոգերը (1711 թ.), Բաղ-

¹ Ն եր ս ե ս Ա կ ի ն յ ա ն, Դասական հայերենը և Վիեննական Մխիթարյան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 135:

² Տ ն ս 2. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 476:

³ Արևմտահայ գրական աշխարհաբարի ձևավորման քննությունը տե՛ս Վ ա ն Ք ա չ ի Ա ճ ե մ յ ա ն, Դրական արևմտահայերենի ձևավորումը, Երևան, 1971:

դասար Դպիրը (1736 թ.) նշում են իրենց ժամանակի հայերենի երեք յուրատեսակ՝ գրաբար, քաղաքացիական հայերեն և բարբառներ: Առաջինը Դպիրն անվանում է կանոնավոր, երկրորդը՝ ոչ ամենևին կանոնավոր և ոչ էլ ամենևին անկանոն, այլ դրանց միջինը՝ «խառն յերկոցունց՝ ի կանոնավորէ և յանկանոնէ», որ օգտագործում են քաղաքացիական առօրյա գրագրություններում ու կենցաղում, իսկ երրորդը՝ ամենևին անկանոն (բարբառներ)⁴:

Այսպիսով XVIII դարում մենք ունենք գրաբարը՝ իբրև գրոց լեզու, և ձևավորվող աշխարհաբարը (արևմտահայ և արևելահայ)՝ իբրև քաղաքացիական առօրյա հաղորդակցման գրավոր ու բանավոր միջոց:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի՞ն էր սրանց ուղղագրությունը:

XVIII դարի գրաբարի և գրական աշխարհաբարի (արևմտահայ, արևելահայ) գրության հիմքում միևնույն երեք սկզբունքն է եղել՝ հնչյունային, ստուգաբանական և ավանդական: Փոխվել էր գրաբարի բաղաձայնական համակարգի դիրքային արտասանությունը: Աստվածաշունչ ընթերցողը, օրինակ, *ր-ին* հաջորդող ձայնեղը շնչեղ խուլ էր արտաբերում, վարձ, մարդ, կարգ բառերը առաջվա նման *varj, mard, karg* չէր կարդում, այլ՝ վարց, մարթ, կարք:

ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ բնագավառում հատկանշականն այն էր, որ ընդհանրանում և կայունանում է *ո*, *օ* տառերի դեռ XVII դարում կանոնական դարձած ուղղագրությունը: XVII դարի բազմաթիվ գրքերում՝ Կղեմես Գալանոսի (1642), Ոսկան Երևանցու (1666), Հովհաննես Կոստանդնուպոլսեցու (1674), «Գիրք այբուբենից» (1675) քերականություններում, «Արհեստ համարողութեան» (1675), «Պարզաբանութիւն Սաղմոսացն Դավթի մարգարէի» (1687), «Խորհրդատետր» (1641), «Առաւել պարզաբանութիւն» (1630), «Գանձ շափոյ...» (1699), «Նորագոյն ծաղիկ զօրութեան» (1685) գրքերում, № 8843 ձեռագրում (1699) և այլուր *օ* հնչող աւ տառակապակցության փոխարեն տեսնում ենք *օ* տառը, և աւ տառակապակցությունը գրվում է միայն *av* հնչյունակապակցության համար: Ահա թե ինչու Մ. Սեբաստացին գրում է, թե աւ, եւ տառակապակցությունները ըստ հին սովորության են թավանշում, վրան թավացման նշան (ւ) դնում, որ կարիք չկա, քանի որ դրանք ամենուրեք կարդացվում են նույն ձևով՝ աւվ. եվ: Այլ էր հնում, երբ աւ-ը գրում էին *օ-ի* փոխարեն⁵:

Այսպիսով XVIII դարում *օ* հնչյունն արտահայտվում է երկու տառով՝ *ո* և *օ*: Ս տառը գրվում է դասական գրաբարի բաղաձայնախորդ աւ երկբարբառի փոխարեն, բառի միևնույն դիրքում (*աւր>օր*, *աւրինակ>օրինակ*, *աւղ>օղ*, *աւծել>օծել*, *աւրէնս>օրէնս*, *աւձ>օձ* և այլն): Ս տառով սկսվող բառերը բարդվելիս կամ ածանցվելիս բառամիջում *օ-ն* պահպանում են, ինչպես որ V դարի գրաբարում աւ տառակապակցությունն էր պահպանվում (*ամենաւրեայ>ամենօրեայ*, *իւրաւրինակ>իւրօրինակ*, *ոսկեաւղ>ոսկեօղ*, *ոսկեղաւծ>ոսկեզօծ*, *անաւրէն>անօրէն* և այլն): Մնացած դեպքերում նույնպես բառամիջում աւ երկբարբառային տառակապակցության փոխարեն գրվում է *օ* (*եղբօր*, *մօր*, *հօր*, *զօրավար*, *մօտ*, *հօտ*, *խօսք*, *ծանօթ*, *կօշիկ*, *կրօն*,

⁴ Գ. Զ ա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 50—51:

⁵ Ս. Ս ս բ ա ս տ ա ց ր, Քերականութիւն գրաբարի լեզուի Հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 479:

Պօղոս, Կօրաւոր, գործիական հոլովի հոգնակի թվի վերջավորութիւնը՝ աչօք, աղաչանօք, իշխանօք և այլն)։ Բառերը օ տառով չեն կարող վերջանալ, քանի որ օ-ն գրվում է բաղաձայնին նախորդող դիրքում։

Ենթակայական դերբայը, Արիստակես Գրիչի (XII դար) սահմանումով, ուղիղ ձևում վերջանում էր աղ-ով, իսկ թեք ձևում՝ ող-ով (ծնաւղ, յիշաւղ, բայց՝ ծնողաց, յիշողաց)։ Դրան համապատասխան էլ դեռ XVII դարից ըսկրած՝ ուղիղ ձևում ենթակայական դերբայը վերջանում է օղ տառակապակցութեամբ, իսկ թեք ձևում՝ ող։ Պետրոս Թիֆլիսեցին գրում է խաբօղ, բայց՝ կարողագոյն, պատրողական⁶, աղպես էլ «Ծողնագիմի աստուածաբանական» (1704), «Բանաբանութիւն իմաստասիրական» (1702) գրքերում՝ փախչօղ, րնթերցօղ, կրօղ, այրօղ, ժողովօղ, բայց՝ իրողութիւն, բարկացողութիւն և այլն։ Սիմեոն (Սիմէօն) Զուղայեցի և Մխիթար Աբաստացի⁷ ալ հնչյունափոխութիւնների հետ հիշատակում են նաև օ>ն փոփոխութիւնը ենթակայական դերբայում՝ սիրօղ-սիրողի, խնդօղ-խնդողի, յիշօղ-յիշողի, յիշողի, յիշողական, ի յիշողէ և այլն։ Այս կանոնը պահպանված է նաև Բաղդասար Դպիրի և այլոց գործերում։

Ո տառը գրվում էր նաև օտարազգի բառերում։ Փոխառյալ բառերի օ հընչութիւնը հայերենում տառադարձվում էր օ տառով բառի բոլոր դիրքերում։ Օրինակ. Մատթեոս և Ղուկաս Վանանդացոց հիշյալ «Բանաբանութիւն իմաստասիրական» գրքում՝ Ահարօն, Թօպացն, Շօհամ, Հալօմ, Շարօ, Տէրիմօն, Զէֆիրօն, Թէատրօն, մօնկրօն և այլն, «Յողնագիմի աստուածաբանական» գրքում՝ բրբօր, խօշ (թուրքերեն), մօիքէց, բօրօտիսագան, մօրձէ, մշվիդօբա, լօցվասա (վրացերեն), ամալօ, բօնում, դօմինի, իստօս (լատիներեն) և այլն։ Մխիթար Աբաստացի «Դուռն քերականութեան» մեջ (1727, էջ 10) թուրքերենի օ հնչյունը նույնպես հայերենում օ տառով է արտահայտում (սօուք, սօուղըն, սօուքտան, քեօմիւր, շօք, կեօրունուրէր և այլն)։

Մնացած դեպքերում բառամիջում օ հնչյութը գրվում է ո տառով՝ հող, թազաւոր, սովաւ, աթոռ, ախորժ, ալեւոր, թոռան և այլն։

Բառասկզբում ՎՕ հնչյունակապակցութիւնը գրվել է ո տառով, որը պահպանվել է նաև բառամիջում (vor—որ, vorokhel—ողոքել, anovokh—անողոք, vorkor—որկոր, vohmak—ոհմակ, vorov—որով, աղպես էլ՝ ողկոլղ, որակալ, որոնեալ, որումն, անորոշ, ձկնորս և այլն)։

Միջին դարերում ե-ւ, տառերի գրութիւնը շատ էր շփոթված, որովհետեւ հնչմամբ գրեթե նույնացել էին։ Ուշ միջնադարում բառասկզբում ե-ն սկսել է չօ հնչվել և այդ դիրքում էլ նրանց գրութիւնը կամաց-կամաց սահմանադատվել է։ XVIII դարում այդ տառերի գրութիւնը բառասկզբում որոշակի է՝ չօ հնչյունակապակցութիւնը գրվում է ե տառով, իսկ օ հնչյութը՝ է տառով։ Է տառով թիչ բառեր են սկսվում, ըստ Առձեռն բառարանի, դրանց թիւը շուրջ 20 է (է, էակ, էջ, էշ և սրանցով կազմված մի քանի բառեր), սրանք բարդվելիս կամ ածանցվելիս է-ն պահպանում են (ամենակական, առէջք, վայրէջք և այլն)։ Բառավերջում օ հնչյութը գրվում է միայն յ տառով (Վաշէ, բոպէ, հիւլէ, հնշէ)։ Բառամիջում օ հնչյութը յ տառով է գրվում միայն դեպքում, երբ շեշ-

6 Պ ե տր ո ս Թ ի ֆ լ ի ս ե ց ի, Գիրք մտածողական, Կ. Պոլիս, 1701։

7 Ս ի մ ե ո ն Զ ու ղ ա յ ե ց ի, Գիրք, որ կուի քերականութիւն, Կ. Պոլիս, 1725, էջ 9, 11 և հտ.։ Մ. Աբաստացի, նշվ. աշխ., էջ 479։

տը կորցնելիս հնչյունափոխվում է (կէս-կիսել, պարտէղ-պարտիղպան, դէգ-դիդել, ալէդէտ չդիտել, կէղ-պիդիլ, գէտ-հայագետ-գիտուն, սէր-սիրել և այլն)։ Եթե նախաշեշտը է հնչյովի չի փոխվում, գրվում է ն տառով՝ Մովսէս-Մովսեսի, աղուէս-աղուեսու, Յովհաննէս-Յովհաննեսի։ Մնացած դեպքերում բառամիջումը հնչյովը ն տառով է արտահայտվում, այդ թվում նաև հոգակապի դեր կատարողը է-ն (ոսկեզօծ, ալգեպան)։

Բառասկզբում ն տառի չը հնչումը վկայում են և՛ ժամանակի քերականները, և՛ տառադարձությունը։ Շրջողերի «Գանձ արամեան լեզուի» զրքում (1711) Երուսաղեմ բառի դիմաց գրված է Jerusalem, Երուսաղ-ի դիմաց՝ Jeruvand, որ նշանակում է, թե հեղինակը ե-ն բառասկզբի դիրքում չը է կարգացել։ Խաղարյանն իր «Գիրք որ կոչի շաւիղ լեզուագիտութեան» բառարանում (1788) գրում է՝ ежели-եժելի, единавременный-եդինովրեմենների և այլն։ Այս տառերի ուղղագրությունից շեղումներ պատահում են, բայց դրանք նախ քիչ են և ապա հանդիպում են միայն բառամիջում, բարբառախառն դորժերում (օրինակ՝ նաղաշ Հովնաթանի բանաստեղծություններում)։

Այս դարում ևս հիմնականում պահպանվում է ը տառի ավանդական դիրքությունը. բառասկզբում գրվում է, երբ լսվում է. ը-ով սկսվող բառերն այդ տառը պահպանում են նաև բառամիջում, երբ բարդվում կամ ածանցվում են (անընդհատ, անընկեր, անընդմեջ և այլն)։ Մյուս դեպքերում՝ բառամիջում և բառասկզբի սկ, սս, ստ, գր, գգ, շտ, շս կապակցություններից առաջ լսվող ը-ն չի գրվում (զգոյշ, սկիզբ, սպասումն, մատենագրութիւն, դրահ, քրքրել, տնանկ, սրաթև և այլն)։

Միջին դարերում ընդունված էր գաղտնավանկի, ինչպես և բառասկզբի հիշյալ կապակցություններից առաջ լսվող ը-ն գրել։ Այս երևույթը շարունակվում է նաև XVIII դարում։ Շատ հեղինակներ, հետևելով միջնադարի գրիչներին, գաղտնավանկի ը-ն գրում են 1. երբ այն հետևանք է հնչյունափոխության։ Օրինակ՝ ծնընդոց, բըղխեալ, ծընաւ, նըստար, լըցո (Շրջողեր), ի տըւէ, տըւընջեան, տըպագրեցաւ, գըրոց (Ջուղայեցի), սընդարար, ախընթոր, հընձան, ծընդական (Ն. Մեղրեցի), արընթաթախ, արընուայ, արընոտ, արթընցնել (Մ. Սեբաստացի) և այլն։ 2. Բառասկզբում՝ սս, սկ, ստ, գր, գգ, շտ, շս կապակցություններից առաջ։ Օրինակ՝ ըսկսան, ըստացման, ըսպիտակութիւն (Ջուղայեցի), թեև ինքը՝ Ջուղայեցին գրում է, թե ըսքանչելի, ըՍտեփաննոս, գըղել, գըրկել ասվում է, բայց սքանչելի, Ստեփաննոս, գգել, գրկել գրվում է։ Հիշյալ կապակցություններից առաջ լսվող ը-ն գրում են նաև Շրջողերը (ըստեղծութոյ, անըսկիզբ, ի ըստորին, ըղթեղ, ըղծագողն, ըստացել և այլն) և ուրիշներ։

Նկատելի է, որ գաղտնավանկի ը-ն գրում են՝ նպատակ ունենալով շեշտել բառի ճիշտ արտասանությունը։ Օրինակ Շրջողերը բառացանկում այդ ը-ն չի գրում, իսկ բերած քաղվածքներում, որոնք կենդանի խոսքի օրինակներ են, գրում է։ Մխիթար Սեբաստացին իր բառարանում գրում է ը-ն, բայց հղում է անում առանց ը-ի ձևերը (ըշտապ—տես շտապ, ըռունկն—տես ռունգն, ըռուփ—տես ռուփ, ըսթափ—տես սթափ և այլն), այսինքն սխալ, բայց տարածված ձևերը հիշատակելով՝ ընթերցողին հղում է ճիշտ գրությունը։

Նկատելի է նաև, որ միևնույն բառում մեկից ավելի ը սովորաբար չեն գրում, օրինակ՝ տնընդարար, տըպագըրեցաւ կամ տպագըրեցաւ, ծնընդական, արթընցնել և ոչ՝ սընընդարար, տըպագըրեցաւ, ծընընդական, արթընցընել։

Ը տառի վերը նշված կիրառություններին ավելանում է նաև բայի նախա-մասնիկ վ-ին հաջորդող ր-ի գրությունը: Բաղդասար Դպիրի քերականության մեջ հանդիպում են՝ կը կարդացվի, կը շինվի, կը հասկցնենք և այլն: Արևմտահայերենում բառասկզբի ա, ու, ե ձայնավորները մի շարք բառերում փոխվում են ր-ի, որը և գրվում է: Օրինակ՝ ըսել, ընել, ըղունգ, ըղեղ, ըղորդ, հասկըցնել, արձըկել, ճըղքել և այլն:

Ուշ միջնադարում բառասկզբի յ-ն արդեն ինքնուրույն կարդացվում, XVIII դարում դա կանոնական է դառնում: Մխիթար Սեբաստացին իր գրաբարի քերականության մեջ գրում է, որ բառասկզբի յ-ն բաղաձայն է, որպիսին մնում է նաև բառամիջում, երբ յ-ով սկսվող բառերն ածանցվում կամ բարդվում են, և բերում է օրինակներ՝ յեղեղումն, անյայտ, յարայիշեմ, ամենայնտին և այլն, որոնք կարդացվում են՝ հեղհեղումն, անհայտ, հարահիշեմ, ամենահետին:

Բառասկզբում ի հնչող յ տառը գրվում է ընդհանրապես ձայնավորներից և դ. ս բաղաձայններից առաջ: Ըստ Առձեռն բառարանի, բառասկզբում հ հընչույթը յ տառով հանդիպում է հետևյալ տառերից առաջ՝ ա (յադենամ, յազեմ «ղոհեմ», յաճոյք, յամր «ծանր», «դանդաղ», յայտնի, յարմար, յանկարծ, յարատև, յատակ և այլն), ե (յելուզակ, յեղադարձեմ, յեսան, յեղանակեմ «փոխեմ», յետկար «ձեռագիր», յեցամիտ «հաստատամիտ», յետամնաց և այլն), ի (յիմար, յիշատակ, յիսուն), ղ (յղանամ, յղկեմ, յղիանամ), ո (յորիլեան, յոգնամեղ, յոգնագէտ, յոլով, յոլովախումբ, յոյզ, յողդողդ, յոյժ, յոյն), ու (յուղարկաւոր, յուլիս, յուղական, յուշարար, յուշիկ, յուռթի), ս (յստակ, յստակամիտ), օ (յօդ, յօգնիմ, յօժար, յօնք, յօրայ «խորթ հայր», յօրանջ, յօրինուած) և մի բառում է շ տառին նախորդող դիրքում՝ յշտող «խիրք», որ Աճառյանը համարում է անստույգ բառ:

Ուրեմն բառասկզբում հ հնչույթը յ տառով կարող է արտահայտվել ա, ն, ի, ո, ու, օ, դ, ս տառերին նախորդող դիրքում, մնացած դեպքերում, երբ ըսվում են հլ, իմ, իո, հր, հք, հտ և այլ հնչյունակապակցությունները, գրվում է ի՛ հլու, հմայել, հնագէտ, հպատակ, հոստոր, հռչակ, հսկայ, հտպիտ, հրաբորբ, հրաման, հծծանք և այլն: Զայնավորների հետ կաղմում է բառերի հազ, հաղ, հալ, հակ, հաղ, հաճ, համ, հայ, հան, հաշ, հապ, հաջ, հառ, հաս, հատ, հար, հաց, հաւ, հեղ, հեթ, հեծ, հեղ, հեճ, հեն, հեշ, հեռ, հես, հետ, հեր, հեց, հեւ, հիւ, հիմ, հին, հոգ, հող, հոմ, հով, հոտ, հոս, հուն, հօփ նախամասնիկները:

Աճառյանը գրում է, թե յ>հ հնչյունափոխության պատճառն այն է, որ այդ երկու հնչույթների միջև ընկած է շնչեղ յ-ն և ինչպես որ շնչեղ թրթռուն բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛ հնչույթները որոշ բարբառներում խլանալով՝ դարձան փ, թ. ք, ց, չ, այնպես էլ շնչեղ յ-ն դարձավ ի. երկու դեպքում էլ պատճառը հ շունչն է: Մեյեն հենց այդպես էլ հ-ն համարում է խլացած յ:

Յ տառը բառամիջում և բառավերջում պահպանում է իր դասական գրությունը: Մխիթար Սեբաստացին և Սիմեոն Զուղայեցին դեռ կրկնում են Արիստակես Դրիշի սահմանած կանոնները: Բառավերջում ա, ո տառերից հետո յ-ն դրում են տարբերելու համար՝ 1. հատուկ անունը հասարակից (Նւա, Յուդա, Նղիա, բայց՝ քահանայ, սատանայ), 2. հրամայական եղանակը՝ սահմանականից (ողբա՛ և ողբայ), 3. գոյականի սեռականը՝ ուղղականից (Մաղաքիա, Նսայեա և Մաղաքիայ, Նսայեայ), 4. սա, դա, նա, քո դերանունները յ-ն ստանում են հոգ ստանալիս կամ հոլովվելիս (սայն, դայն, քոյն): Առաջին երկու-

սը վերաբերում են ոչ միայն գրաբարին, իսկ չ տառով ուղղականն ու սեռականը տարբերելը և վերջինը՝ հատկապես գրաբարին: Աշխարհաբարում բառավերջում ա, ո-ից հետո չ է գրվում, անկախ նրանից՝ հնչվում է (գոյ, բայ, հայ, հոյ), թե չի հնչվում (ծառայ, սատանայ):

Այս տառի գրության շեղումներ էլ կան, բայց դարձյալ հազվագեղ են և պատահում են բարբառախառն գործերում, ինչպես Հովնաթանի չիշյալ բանաստեղծություններում (արխայլուխ, արէյքական, եասայման, անուշայհոտ, մեղայւոր, անմայական և այլն):

Ընդհանուր գրվում է եւ տառակապակցությամբ՝ տեան, հրեայ, սեաւ, գործեալ, տեսեալ, առեալ, ողորմեա և այլն:

Բաղաձայնախորդ ու չ երկհնչյունը արտահայտվում է ու տառակապակցությամբ (բոյս, լոյս, գոյն, զգոյշ, նշոյլ, սոյն, պտոյտ և այլն): Մնացած երկհնչյունները (գրաբարում՝ երկբարբառներ) ինչպես արտասանվում, այնպես էլ գրվում են՝ այ-այ (հայոց), իւ-իւ (բիւր), ոյ-ոյ (գոյակ) և այլն, բացի ուա երկբարբառից, որ կարդացվում է վա:

Եթե ո-օ, ե-է. չ տառերի ուղղագրության մասին կարելի է ասել, որ այն կանոնավորված է (չնչին շեղումներով), ապա Վ հնչյութի և ընդհանրապես բաղաձայնների մասին նույնը չի կարելի ասել: Վ հնչյութը V դարում արտահայտվել է վ և լ տառերով (vard-վարդ, avazan-աւազան): Սրանց միջնադարում ավելանում է բառամիջում ձայնավորանախորդ ու տառը, որ ընդհանրապես ու պարզ ձայնավորի տառն է: Միխիթար Սեբաստացին իր գրաբարի քերականության մեջ նորից նշում է, որ ու տառը բառամիջում ձայնավորին նախորդող դիրքում վ է հնչվում, իսկ բաղաձայնին նախորդելիս՝ ձայնավոր ու (տուն, սուր, ուրախ, ուս): «Թաւացեալ ու տառս, որ որպէս զու աւտաբերի, բազմիցս ի անհմտաց գրչաց շփոթի ընդ տառիս վել: Ուստի զգուշանալի է, գի մի փոխանակ գրելոյ հովիւ, խոստովանիլ, գրեսցի հուիւ, խոստուանիլ և կամ փոխանակ գրելոյ Աստուած, հայցուած, գրեսցի Աստված, հայցված»⁸: Իբրև բացառություն՝ Սեբաստացին հիշատակում է ու լծորդության անկատար բայաձևերը (լնուի, լնուիր), ուր ու տառը ձայնավոր ու-ի նշանն է: Հոգնակի գործիականում լ-ը ի հնչյութի հետ կազմում է եու երկբարբառը, ուր լ-ը բաղաձայն չէ: Օրինակ՝ խաչիւք, բանիւք, այսոքիւք ձևերում իւ-ն կարդացվում է եու, ոչ իվ (խաչեուք, բանեուք, ոչ՝ խաչիվք, բանիվք): Հեղինակն զգուշացնում է չշփոթել իւ (iv) և իւ (u), ու (v) և ու (u) տառերը:

Եթե ո-օ, ե-է և չ տառերի ուղղագրությունը ընդհանուր էր գրաբար, արևմտահայ և արևելահայ լեզուներում, ապա բաղաձայնների և ը-ի գրությունը երկու սկզբունք ունենալով՝ ըստ դասական հայերենի (ավանդական) և ըստ արտասանության (հնչյունային). ընդ որում արևելահայերենում ընդունված էր դասական գրությունը, ըստառությամբ Վ բաղաձայն հնչյութի:

Ահա թե ինչու Ա. Ալտընյանը գրում է, թե անցյալ դարի վերջերից բանասերներն սկսեցին զանազանություն հաստատել գրաբարի և աշխարհաբարի ուղղագրության մեջ, և նույն բառն ունեցավ գրության երկու ձև՝ վ-ով և լ-ով, ե-ով և է-ով: Գրաբարի ծնաւ, կախուեցաւ, տուաւ, շինուած, վարձուոր, տաւուլ ձևերը աշխարհաբարում դարձան՝ ծնաւ, կախվեցավ, տվաւ, շինված, վարձվոր, տաւվան, տեսնվեւ է-տեսնվէւ է, գնացեւ է-գնացէւ է և այլն: Բայց սա խափան-

⁸ Մ. Սեբաստացի, նշվ. աշխ., էջ 475—476:

վեց, սկսվեց միջին գրությունը՝ դրիլ, շինւած, գտնուիլ, տասուիրեք, պարզը-
իլ: Հիմա, ասում է նա, գրում են՝ շինուած, տեսնուիլ, տասուիրեք և այլն⁹,
Այս տարբերությունը, սակայն, երևում է ս, ու և մի քանի բաղաձայն հնչույթ-
ների գրության ժամանակ: Ե-ի և է-ի գրության շեղումները հազվադեպ են:

V հնչույթը գրաբար գրականության մեջ շարունակում է արտահայտվել
միջնադարի գրությամբ՝ վ, Վ, ու տառերով: «Յոգնադիմի աստուածաբանական»
(1704), Մատթեոս և Ղուկաս Վանանդացոց «Բանաբանութիւն իմաստասիրա-
կան» (1702), Պետրոս Թիֆլիսեցու «Գիրք մտածողական» (1701, Աթանաս
Կոստանդնուպոլսեցու «Յամառօտ քերականութիւն» (1774), Սիմեոն Զուղայե-
ցու, Մխիթար Սեբաստացու, Երեմիա Մեղրեցու, Յունան Թոխաթեցու, Շրյոգերի
գրքերում բաղաձայնանախորդ թավացյալ ու-ն կա՛մ պահպանված է և կա՛մ
փոխարինված Վ տառով (միջնադարյան ուղղագրութիւն): Օրինակ՝ թշուառու-
թիւն, արտասուիլ, մահուամբ, դժուար, անուան, թուի, վայելուածս (Սեբաս-
տացի, Թիֆլիսեցի): Միևնույն գրքում թե՛ թավացյալ ու-ն է պահպանվում, և
թե՛ փոխարինվում է Վ-ով: «Դաշտիկ ծաղկալից» գրքում կան թե՛ մահւան, հով-
ւաց, տւեալ, և թե՛ լուալ, հրճուանօք, ստացուածոցն, դժուարինք, թշուառու-
թիւն ձևերը: Նույնիսկ միևնույն բառը երկու գրությամբ է պատահում՝ մա-
հւան և մահւան, պատուելիս-պատուականագոյն, թշուառութիւն-թշուառութիւն,
արտասուօք-արտասուօք (ն. տ.): Զուղայեցին թավացյալ ու-ի փոխարեն գրում
է Վ տառը (Հովւապետ, պատւիրեաց, թւեցեալ, լեզւի, անւան, նըւազ, լաճամ,
գրւատել, պիտանայիս, տըւողին և այլն):

Երբեմն միևնույն հեղինակը գրաբարով գրված իր գրքում պահպանում է
ավանդական գրությունը, իսկ աշխարհաբարով գրվածում հետևում է արտա-
սանությանը: Օրինակ՝ Մխիթար Սեբաստացին, որ ընդհանրապես ավանդա-
կան ուղղագրությամբ է առաջնորդվում, իր «Դուռն քերականութեան» գրքում
(1727) թավացյալ ու-ի փոխարեն երբեմն վ տառն է գրում: Այդ քերականու-
թյան մեջ հանդիպում են՝ սըվոր, սըվով, սըվոնք, սըվոնց, նվոր, ճվոնցմէ և
նման այլ ձևեր: Աղուոր, աղուէս, զգուիլ, զինուոր, թթուիլ, լեզուանի, պա-
տուել ավանդական ձևերի կողքին կան նաև՝ լուացւիմ, լուացւինք, այլև՝ վառ-
վերեմ, վառվերես, թօթվել, ժողվել, լեղվնալ, կովիլ, ծարվնալ գրություն-
ները, որոնցից թօթվել և ժողվել բառերի վ-ն պատճառաբանվում է այդ բառե-
րի կազմությամբ՝ թօթովել > թոթվել, ժողովել > ժողվել: Շրյոգերը, որ գրում
է ավանդական գրությամբ, քահանայի և ֆրանկի զրույցը ներկայացնող հատ-
վածում օգտագործում է րվի, պատվոյ, կովի ձևերը: Աշխարհաբար գրափանու-
թյան մեջ, ուր, ինչպես ասացինք, ընդհանուր առմամբ պահպանված է ավան-
դական ուղղագրությունը, հաճախ է պատահում թավացյալ ու-ի փոխարեն վ
տառը: Նաղաշ Հովնաթանը գրում է՝ մաշվել, կովի, փովի, ցրվի, լեզվովդ, նը-
վազի, սալվի, զարդարվես, ծովի, երվում (կրվում) և այլն: Բագդասար Դպի-
րը, հետևելով բանավոր խոսքին, ամենուրեք թավացյալ ու-ի փոխարեն վ տա-
ռն է գրում (հնչյունային գրություն): Օրինակ՝ կարդացվիր, հասկցվի, կապ-
վի, կը շինվի, շարվածքն, կու ճանաչվի, կիմացվի, բարդվեցաւ, դրվի, պիտի
հոլովվի, թվով, բացվիր, պատրվակ և այլն: Վ-ով գրություն կա նաև նրա «Բա-
րեագիրք» ժողովածուում՝ պատվական, դժվար, նվաստ, տվան, թվին, վճար-

⁹ Ա. Այտրնյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լե-
զուի, Վիեննա, 1866, էջ 342:

վեցա և այլն: Բայց ահա նրա «Տաղիկներում» կա՛մ պահպանված է վահրն-
չյուն ու տառը, և կա՛մ էլ փոխարինված է Վ տառով՝ աղնրի, թրշուառ, դուար-
նադէմ, տրիշ, պատուով, թրականին, թրիցէ, չրիցէ և այլն: Վ-ով քիչ բա-
ռեր կան՝ բացվիր, պատրվակ և մի երկու այլ բառեր: Թավացյալ ու-ի փոխա-
րեն հաճախ վ տառն է օգտագործված նաև Նզովի «Сношение...» ժողովա-
ծուում (XVIII դար),¹⁰ որ նույնպես բարբառախառն լեզվով է գրված (պատ-
վական, խնդրվածքն, տվինք, հետեվում անք, հետեվելանք, նշան է տվել,
թոյլ չէք տվել, գլխավոր, հավատացեք, լեզվով, յունվար, գրվեցաւ, հաւաք-
վումեն, խառնակվումեն, տարվայ, հրամանավ, հավադով, կհավագէք և այլն):
Ինչպես երևում է օրինակներից, այստեղ արդեն վ տառն օգտագործված է բա-
ռի բոլոր դիրքերում, բառավերջում՝ ձայնավորից հետո (հրամանավ), բառա-
միջում՝ ձայնավորների միջև (մեծավորաց, հավադալ), բաղաձայնների և
ձայնավորների միջև (լեզվով, պատվելի, խնդրվածք), սրանց ավելացրած նաև
կրավորականի ածանցը, որ՝ ամենուրեք գրված է վ տառով՝ չիմացվի, կոտոր-
վածն և այլն: Փաստորեն կիրառված է «մի հնչույթին մի գիր» սկզբունքը:

Ընդհանուր տարածված կանոն է, որ օտարազգի V հնչույթն արտահայտ-
վում է վ տառով, ինչպես որ օ-ն՝ օ, Ե-ն՝ է տառով: Օրինակ՝ «Յոգնադիմի աս-
տուածաբանական» գրքում վրացերենի V հնչույթը արտահայտված է վ տա-
ռով՝ մշվիդօբա, միսդէվդիմաս, թվալի, լօցվասա և այլն: Աթանասը հիշյալ
քերականության մեջ aqua-ն հայատառ գրում է աքվա, il dilavio > իլ տիլա-
վիօ, qua > քվա, que > քվե, dativo > տաթիվո, nominativo > նօմինաթիվօ,
genetivo > ճենիթիվօ և այլն: Բաղդասար Դպիրը իր տաղերում թուրքերենի
v-ն տառադարձում է վ՝ նէվրուզ, եավաշ, դօվա, օվա, խվա, տուվա, ավարա,
հէվէս, հէվէ, ճէվիզ, տիվանէ և այլն: Խալդարյանի հիշյալ բառարանում հան-
դիպում են՝ դվաժդրի, եավիտեան, սօմնեվատսեա, բօեազլիվլրի, դօլգօվատրի,
ուդիվլեաիուսեա գրությունները:

Շարունակում է ընդարձակվել պայթական և պայթա-շփական բաղաձայն-
ների դրույթյան և արտասանության միջև դեռ նախնյաց գրավոր հուշարձան-
ներում նկատված անհամաձայնությունը: Արևմտահայ գրական լեզվում եռաս-
տիճան բաղաձայնական համակարգը վերածվում է երկաստիճան խլազուրկ
համակարգի: Արևմտահայ հեղինակներն օտարազգի հնչմանը հարազատ մնա-
լու համար նրանց ձայնեղի դիմաց մեր խուլն են դնում՝ հ > ա, ց > և, ռ > տ,
սրովհետև խուլերը (պ, տ, կ) ձայնեղ են հնչում, գրում են՝ բադ, հնչում են
փար, ուստի եթե օտարազգի b-ի դիմաց բ գրեն, փ կհնչեն և կհեռանան փո-
խատու լեզվի արտասանությունից: Ահա թե ինչու Աթանասն իր հիշյալ գրքում
գրում է՝ ba-պա, be-պէ, da-տա, de-տէ, ga-կա, ge-ճէ, gi-ճի, իսկ լատինե-
րեն խուլերը տառադարձում է շնչեղ խուլերով՝ pa-փա, pe-փէ, ta-թա, te-թէ
և այլն: Ըստ այսմ էլ լատինական բառերը հայատառ գրում է՝ donna > տօննա,
l'amico > լամիքօ, Gesu Gristo > Ճէզու Գրիսթօ, singoiare > սինկօլարէ, ab-
lativo > ապլաթիվօ և այլն: Մխիթար Սեբաստացին թուրքերեն բառերը հա-
յատառ գրում է՝ պաշ (bas), տուշման (duşman), որ կարդա բաշ, դուշման,
այդպես էլ՝ նիճէքիմ, պէն, պապանընկ, պիդ, օտըր, կեոռունուրլէր և այլն, ուր
թուրքերեն ձայնեղների դիմաց գրել է հայերեն խուլերը: Երբեմն, տուրք տալով
ժողովրդական արտասանությանը, Սեբաստացին գրում է՝ մունճ, թրթնճուկ,

¹⁰ Э з о в , Сношение Петра великого с армянским народом XVIII в. СПб., 1898.

սոսինծ, բրինծ, ժանկ, գանկատ, դանկակ և այլն: Իր գրաբարի քերականության «Յաղագս յարմարագրութեան» խորագրի տակ, սակայն, խոսելով բաղաձայնների ուղղագրության մասին, նա պահանջում է գրել՝ ամպ, զօրավիդ, թագ, բաղարչ, բանտ, բամբասել, գաղափար, դանգակ, Թաղէոս, լափել, խաբել, խափանել, կոնք, ճագար, մարմաջել, օթոց, յոգունք, քաջ, օգիք, օդ, փունջ, տքնիլ, պապանծիլ, պանդուխտ և ոչ՝ ամբ, ղորավիկ, թաք կամ դագ, բաղարչ, բանդ, բանպասել, գաղաբար, դանկակ, Թաթէոս, լաբել, խափել, խաբանել, կոնդ, ճաքար, մարմաշել, հոքունք, օդոց, քաշ, օթիք, օթ, փունջ, տգնիլ, պապանծիլ, պանտուխտ: Հիշատակում է կրկնակ գրություն ունեցող բառերը՝ բղեշխ-բթեշխ, բողոքել-բողոգել, գայթազել-գայթակզել, շողոքորդ-շողոքորթ, շոգա-չոքա, սեփհակսն-սեփական, քարտէս-քարտեղ, փափազիլ-փափաքիլ, ցանկ-ցանդ, ժանկ-ժանգ և այլն: Նաև այն բառերը, որոնք արտասանությամբ նույնն են, գրությամբ են տարբերվում՝ որթն (խաղողի)-որդն (ձիձու), պնտիլ (հետամուտ լինիլ)-պնդիլ (ամրանալ), տրմուղ (անվարժ)-տրմուխ (փոցխ) և այլն: Այս բոլոր զույգ ձևերը գալիս են շատ հնուց, ուստի Սեբաստացին չէր կարող անտեսել: Կարծում ենք, որ Սեբաստացին առաջնությունը տալիս է գրաբարյան ձևերին, ավանդական ուղղագրությանը, եթե երբևէ օգտագործում է ժողովրդական ձևերը, ապա այդ այն դեպքում, երբ տվյալ բառաձևը շատ է տարածված, մյուս կողմից՝ այդ ձևերը նա օգտագործում է աշխարհաբարի քերականության մեջ՝ ցույց տալու համար ժողովրդական ձիշտ արտասանությունը: Նա ձգտում էր աշխարհաբարը գրաբարով մշակել, հարըստացնել¹¹:

Արևելահայ գրական լեզվում պահպանվում է բաղաձայնների եռաստիճան համակարգը՝ Ե-բ, Կ-պ, ՈԻ-փ: Խաղարյանի բառարանում այդպես էլ տառադարձված է՝ единославный-եղինոսլավնրի, воздух>փօղդուխ, обижать>օրիժատ, позволить>պօզվօլիտ, как>կակ և այլն: Շրջողքերը գրում է՝ Միհրդատ>Miherdat, հերրայնցերէն>Hebraice, Եփրատ>Euphrates, Պետրոս>Petrus, Պոնտացի>Pontius, Հայկ>Haik, Դեղամ>Gelam, Ընձաք>Endsakh, դգակ>Dgak, Պարուր>Paruir, Կալպակ>Kaipak և այլն:

Բաղաձայնների ուղղագրական վերը հիշատակված շեղումները արևմտահայերենում արտահայտվում են գերադանցապես տառադարձության ժամանակ, փոխառյալ բառերում: Մյուս դեպքերում արևելահայերենի պես արևմտահայերենում էլ գործում է ավանդական սկզբունքը: Արևմտահայերեն էլ (Սեբաստացի և ուրիշներ) գրում են՝ ճամփա, տուն, օծել, ճիշտ, ծիրան, որպես, ճուտ, ձեռք, դուռ, ջուր և այլն, տարբերությունը արտասանության մեջ է: Այլ բան է, որ որոշ հեղինակներ շեղվում են ընդունված ձևերից, ինչպես այդ նկատում ենք Թոխաթեցու, Սեբաստացու, Բաղդասար Դպիրի հիշյալ գրքերում:

Հայերենի համար ընդհանուր երևույթ է հետևյալ իրողությունը. 1. իրար կողք ընկած բաղաձայնները երանգով նույն տեսակի են լինում: Կարող են լինել աստ-ասթ, ասպ-ասփ, ասկ-ասք, ախտ-ախթ տառակապակցությունները, բայց ոչ՝ ասդ, ասբ, ասդ, ախդ: 2. տառին կարող են հաջորդել ձայնեղները և ոչ խուլերը՝ աղդ, աղբ, աղգ, բայց ոչ՝ աղպ, աղփ, աղտ, աղթ, աղկ: Առձեռնում աստ-ով, ասպ-ով, սկսվող շատ բառեր կան, ասփ-ով միայն մի բառ

¹¹ 2ր. Ա ճ ա ո յ ա ն, նշվ. աշխ., էջ 531: Վ. Ա ճ ե մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 42:

կա՝ ասփողելոն (անուշահոտ տառնկ), ասք-ով՝ միայն ասք բառն է: Ասք, ասդ, ասդ կապակցություններով սկսվող բառ չկա: 2. Ձայնավորներին ու ձայնորդներին հաջորդող ձայնեղները փոխվում են շնչեղ խուլի ($բ > փ$, $դ > ք$, $գ > թ$, $ջ > չ$, $ծ > ծ$), բայց ավանդական ուղղագրության սկզբունքով դրությունը մընում է անփոփոխ: Այստեղից էլ բխում են ուղղագրական հետևյալ կանոնները.

ա) Փ հնչույթը ք տառով է գրվում ր-ից հետո (հարբել, սրբել, ուրբաթ, սուրբ, երբ, նուրբ, դարբին և սրանցով կազմված բառերում), ա-ից հետո (խարբել, շաբաթ) նաև՝ Ցակոբ, համբերել, համբույր և սրանցով կազմված բառերում: Մնացած դեպքերում փ հնչույթը գրվում է փ տառով:

բ) Թ հնչույթը դ տառով է գրվում ր-ին հաջորդող դիրքում (մարդ, վարդ), բացառությամբ՝ արթուն, երթ, ղուարթ, թարթել, թերթ, թրթիռ, լուրթ, խորթ, կիրթ, հարթ, հորթ, մերթ, մորթի, շողորորթ, շորթել, որթ, շուրթ, պարթև, սաղարթ, փարթամ, քերթող (քերդող) և սրանցով բաղադրված բառերի: Ն-ին հաջորդող դիրքում՝ անդամ, խնդիր, կենդանի, ընդամենը, ընդհանուր, ընդունել, ընդունակ և սրանցով բաղադրված ձևերում: Ձայնավորին նախորդող դիրքում՝ դագար, գդակ, գդալ (դգալ), դդում, Թադէոս, օդ և սրանցով բաղադրված ձևերում: Մնացած դեպքերում ք հնչույթը գրվում է ք տառով՝ թաթ, թեթև, թիւր, թիւ, թուխ, թոխը, կաթիլ, սաթ և այլն:

գ) Չ հնչույթը ջ տառով է գրվում ր-ին հաջորդող դիրքում (վերջ, արջ, թրջել), բացառությամբ՝ դարչին, չարչի և իչ ածանցով (վարչական) բառերի: Ղ տառին հաջորդելիս (աղջիկ, առողջ, գեղջ, եղջիր և այլն), բացառությամբ զեղչել բառի: Ձայնավորից հետո՝ աջ, մէջ, առաջ, ոչիւ: Մնացած դեպքերում չ հնչույթը գրվում է չ տառով՝ չար, չիք, ինչ, չոր և այլն:

դ) Ց հնչույթը ծ տառով է գրվում ր տառին հաջորդելիս (բարձր, արձակ, փորձ, դերձակ, համբարձեալ, դարձ և այլն), բացառությամբ՝ Արցախ, հարց, ընթերցայ, պախուրց, տրցակ, ուրց, մրցիլ և սրանցով բաղադրված բառերի: Ղ-ին հաջորդելիս (դեղձ, դաղձ, մաղձ, ասաղձ, հեղձ, դեղձանիկ և այլն), բացառությամբ են՝ աղցան, քաղց, քաղցր: Ց-ն ձ-ով է գրվում նաև օձ բառում:

ե) * հնչույթը գ տառով է գրվում ր-ին հաջորդելիս՝ երգ, կարգ, թարգման, մարգագետին, մարգարիտ, մարգարէ, միրգ, պարգև, Մարգար: Ձայնավորին հաջորդելիս՝ աւագ, երկրպագել, արեգակ, զուգել, էգ, թագաւոր, ծագել, ծեգ, հագուստ, հոգս, հոգնել, յոգնակի, ձագ, ձիգ, ձգնել, ճրագ, նվագ, մուգ, շոգ, պատարագ, վարագոյր, օգնել, օգուտ և սրանցից կազմված բառերում:

զ) Խ հնչույթը բաղաձայնին նախորդելիս մեծ մասամբ ու տառով է արտահայտվում՝ աղջիկ, ողջ, ողկոյդ, բողկ, փեղկ, մեղք, դեղձ և այլն: Բացառություն են՝ ապուխտ, բախտ (բաղդ), դժոխք, կխտար, կմախք, յախճապակի, նախճիր, դրախտ, երախտիք, զմրուխտ, նախշ, թուխս, վախճան, խրոխտ և այլն, շուրջ 30 բառ:

է) Ռ-Ր.—Ր-ով սկսվող բուն հայերեն բառ չունենք: Նախնիք գործածել են՝ րաբունի, րաղարդ, րախալի, րախճան, րահետ, րամ, րամապետ, րենական, րուպ և սրանցով կազմված մի քանի բառեր, որոնք, սակայն, XVIII դարում գործածությունից կամ հանված էին (օրինակ՝ րամեմ, «ժողովել», րենական «աստվածաչին», րաւդոս «գավաղան» և այլն) և կամ էլ գործածվում էին դրանց հայացի ձևերը՝ րախական > ուրախական, րախճան > խրախճան, րահետ > արահետ, րակերտ > հրակերտ, հրաշակերտ և այլն: Մնացել են գործածական ըրպէ, ռարբի և սրանցով բաղադրված բառերը: Մնացած բառերի սկզբ-

բում լսվող ու հնչույթը ու տառով էլ գրվում է: Դրանց թիվը նույնպես շատ քիչ է, շուրջ 20—25 բառ (ռազմ, ռահ՝ «ճամփա», ռահվիրա, ռամիկ, ռայ՝ «դրոշակ», ռեմոն՝ «գրավ», ռետոր, ռիմ՝ «քեն», ռունգ, ռոճիկ, ռոշնական՝ «լուսավոր»): Բոլորն էլ փոխառյալ բառեր, որ նշանակում է, թե հին հայերենում ու կ'ը հնչույթներով սկսվող բնիկ հայերեն բառեր չեն եղել:

Բառամիջում և տառին նախորդող դիրքում սովորաբար ու տառն է լինում (դառն, ձեռն, դուռն, դառն, առն, դառնալ, սպառնալ և այլն): Բ տառը նախորդող դիրքում կարող է լինել հնչյունափոխության հետևանքով՝ գարնան, արնաներկ, վերնատուն և այլն: Կ տառը այլ բաղաձայններին կարող է հաջորդել բառակազմության կամ հնչյունափոխության հետևանքով՝ կովան, առջև, սառչել, ուռչել, կոթնել, սառցապատ և այլն: Վ-ով վերջացող արմատի կրկնությամբ կազմված բառերի առաջին ու-ն փոխվում է ր-ի՝ թըր-թիռ, մրմուռ, գրգիռ և այլն:

բ) Ն—Մ.—բ, պ, փ պայթականներին նախորդող դիրքում գրվում է ս տառը՝ ամփոփել, ամբարիշտ, ամպ, համբերել, արեամբ, հետաքրքրությունամբ և այլն: Այս բաղաձայններից առաջ ս տառը կարող է գրվել, եթե ան նախածանցի բաղադրիչն է՝ անբախտ, անփոյթ, անպարտ, անբարբառ, անբիծ և այլն: Նաև բաղադրյալ բառերում, երբ ն-ով վերջացող բառամասին հաջորդում է բ, պ, փ տառերով սկսվող բաղադրիչ՝ դոնբաց, դոնփակ, ձեռնպահ:

Փոխադրեցական (առնմանում, տարնմանում) հնչյունափոխության հետևանքով հաճախ բանավոր խոսքում առաջացած բաղաձայնական փոփոխություններն արտահայտվել են նաև գրավոր խոսքում և ստացվել են գրության դույզ ձևեր: Օրինակ՝ և տառին նախորդող դիրքում բ, գ, դ, ձ, ջ տառերին դուգահեռ հանդիպում են պ, կ, տ, ծ, օ տառերը՝ ըմպել-ըմբել, ցանկացանգ, ընկոյղ-ընգոյղ, բանտ-բանդ, անդի-անտի, գունտ-գունդ, ինձ-ֆինձ, գծուծ-գձուծ, դէջ-դէձ, բջիջ-բձիձ, կինջ-կինձ և այլն: Ս, շ տառերին նախորդող դիրքում փ, թ, ք տառերին դուգահեռ հանդիպում են պ, տ, և տառերը՝ Դիմաքայան-Դիմակայան, Ֆելիքս-Ֆելիկս, Ալեքսանդր-Ալեկսանդր, վաթսուն-վատսուն, կաթսա-կատսա, նաև՝ ապշիմ-ափշիմ, ափսէ-ապսէ և այլն:

Ձայնեղներից առաջ երբեմն գ-ի փոխարեն հանդիպում է ս տառը՝ սգեստ, սբոսնել, սգալ (զգալ), սկիսբ, սկսբնական և այլն: Սա կարող է երկու պատճառի հետևանք լինել, նախ որ ձայնեղին նախորդելիս զ հնչույթը խլանում է, զ-ն ս է հնչում (առնմանում) և ապա՝ գրողը կարող էր առաջնորդվել բառի կազմությամբ (սկսել > սկիսբ): Նույն դիրքում ծ տառի փոխարեն հանդիպում է շ տառը՝ նծղեհ-նշղեհ, ածխոյծ-աշխոյծ, Ածղահակ-Աշղահակ, նաև՝ ղշխոյ-ղծխոյ: Հանդիպում են նաև՝ սղալ, վաղձան, բաղդ, ամբիծ դրությունները իբրև զուգահեռներ փշտ ձևերին:

XII—XVII դարերում իբրև կանոն մեծատառով սկսվում էին վերնագրերը, վերջակետից հետո, բանաստեղծությունների յուրաքանչյուր նոր տողը: Ուշ միջնադարում արդեն հատուկ ու հասարակ անունների գաղափարը կար, բայց դրանք զեռ գրությամբ չէին տարբերակում, նույնիսկ տերունական անունները, որ սովորաբար մեծատառով էին գրվում (Աստված, Քրիստոս, Յիսուս) պատահում են փոքրատառով: Մեծատառի գործածության այս սովորույթը շարունակվում է նաև XVIII դարում: Մխիթար Սեբաստացին բառարանի զխաբառերը քերականության գրքում օրինակների առաջին բառերը, տերմինները մեծատառով է գրում, պահանջում է մեծատառով սկսել նոր տողը, վերնագրերը, բա-

նաստեղծական նոր տողը, «յսկղբունս անուանց Աստուածայնոց», բայց հատուկ անունները փոքրատառով է գրում՝ ասիա, հայաստան, մովսես, դաւիթ, մամբրէ, եղիշէ, զաղար, եղնակ, ասողիկ¹²: «Յոգնադիմի աստուածաբանական», «Բանաբանութիւն իմաստասիրական» գրքերում նույնիսկ որոշ տերմիններ գրված են մեծատառով՝ Հեղութիւն, Արիութիւն, Սահմանք, Քերականն, Քանակութիւն և այլն, իսկ մարդկանց մի քանի անուններ գրված են փոքրատառով (աղաթոն, սողումոն): Աթանասը հիշյալ գրքում իր անունը հայերեն փոքրատառով է գրում, իսկ լատինատառ՝ մեծատառով (աթանաս, Athanas): Բաղդասար Դպիրն իր քերականության մեջ տարբերակում է հատուկ ու հասարակ անունները, բայց շատ անուններ փոքրատառով է գրում (մովսէս, պետրոս, դաւիթ): Սիմեոն Զուղայեցիին գրում է՝ մելիքսեթ, յակոբ, մուրատ, Էրեմիա, պետրոս, յօհաննէս, ամասիոյ, բուղանդիոյ, յուզա, կոստանտիլ, ֆրանկուլ և այլն: «Դաշտիկ ծաղկալից» գրքում հանդիպում են՝ աստված, գրիգոր, հալեպ, կոստանտինոպոլիս գրությունները: Շրջողերը մեծատառով է գրում նաև ազգերի անունները, բայց նրա գրքում հանդիպում է ԲԵՐՈՐԷ գրությունը: Նույնի հիշյալ գրքում նույնպես հատուկ անունները պատահում են փոքրատառով՝ աղաճանէ, կոստան, գրիգոր, տաղստանու և այլն: Նշանակում է այս դարում աշխարհադրական անուններն ու անձնանունները մեծատառով գրելը գեո կանոնական չի դարձել:

Թեև դեռ XIII դարում Բեորդ Սկեռացին սահմանել էր տսղաղարձի կանոնները, բայց դրանք միջնադարում չէին պահպանվում: Միայն XVII դարից սկսած՝ նկատվում է դրանց հետևողական կիրառում: XVIII դարում Ս. Զուղայեցին, Մ. Սերաստացին քերականության իրենց գրքերում նորից են շարադրում այդ կանոնները, որոնք գրեթե չեն տարբերվում Սկեռացու կանոններից և, հիմնված լինելով վանկատման վրա, գործում են առայսօր, չնչին տարբերությունով: Ըստ այդ կանոնների՝ միշտ բաղաձայնը պիտի տանել հաջորդ տող, մեկից ավելի բաղաձայնների դեպքում վերջին բաղաձայնն է դնում հաջորդ տող, դադարավանկի ը-ն տողադարձի ժամանակ գրվում է: Ո, ա տառերին հաջորդող չ տառը և ա, ե տառերին հաջորդող չ տառը նախորդող ձայնավորներից չպիտի բաժանել (հրամայ-ել, խոյ-ակ, աւ-ետել, տեւ-ել), հետագայում այս կանոնը փոխվեց, չ-ն ու Վ-ն (վ) անցնում էին հաջորդ տող: Ն-ին հաջորդող ա, օ տառերը նույնպես չեն տրոհվում ե-ից (իւր-եանց, եօ-թան), խորհուրդ է տրվում բաղադրյալ բառերի բաղադրիչները լրիվ պահել, չտրոհել (ան-ահ, ոչ՝ ա-նահ), թավացյալ ու-ն հաջորդ տողը տանել (ան-ուան):

Հեղինակները շարունակում են օտար լեզուների նմանություններ որոշ բառեր իրար կպած գրել, որ պիտի է ուշ միջնադարից: Ռիվոլան (1633) լատիներենի օբիեկտով գրում է՝ արդարեղնել, աղաթիկտալ, աղածմիս, արժանբան, միանգամ, դաշինքէնել և այլն: Շրջողերն էլ (1711) գրում է՝ բաղումանգամ, ոչուրեք, ոչրնաւորեք, թէոչ, բայցսակայն, դբուռնարկանել և այլն: Թոխաթեցին օժանդակ բայն է կպցնում դերբային կամ վերագրին (խոստացեալէր, թողլոցեն, քաղցրէ, անկեալիցէ, եսեմ, բաղումանգամ): Այսպես են գրում Պետրոս Ղրիմեցին, Սիմեոն Զուղայեցին, Մխիթար Սերաստացին (լծեալիցեմ, լծեալեմ, անկեալեմ, եղերենք, եղերէի, եղերէր, վառերեմ, գործեալիցեմ, լաւէ, հաւատամքնէ և այլն): Սմ բայի ձևերի նախորդող բառին կպած գրության այս սովորույթը շարունակվում է դեռ XIX դարում:

¹² Մ. Սերաստացի, նշվ. աշխ., էջ 4:

ОБ АРМЯНСКОМ ПРАВОПИСАНИИ XVIII ВЕКА

С. В. ГЮЛЬБУДАГЯН

(Резюме)

В XVIII в., наряду с древнеармянским неразговорным, книжным языком, формировались восточноармянский и западноармянский литературные языки. Имея некоторые грамматические особенности, они оба подчинялись одним и тем же правилам правописания — звуковым, этимологическим и историческим. Звуки *п-о*, *б-ѣ* и *ј*, имевшие в средневековые неустойчивое положение, стали устойчивыми как в древнеармянском, так и в западноармянском и восточноармянском языках. В древнеармянской литературе звук *у* обозначался буквами *վ*, *ւ*, *ու*, а в западноармянской и восточноармянской литературе *ու*, содержащий звук *у*, заменялся буквами *ւ* и *վ*.

В западноармянской и восточноармянской литературных языках часто наблюдались некоторые нарушения классического написания *ր*. В положении после гласных и сонорных спирантные оглушались, но сохранялось классическое их написание. Наблюдались отклонения в западноармянской транскрипции. Стал более упорядоченным перенос. Географические названия и имена людей не всегда писались с заглавной буквы.